ՏԵՂԵԿԱՆՔ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՎԻԱՑԻՈՆ ԳՈՏՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության և Եվրոպական Միության անդամ-պետությունների միջև ընդհանուր ավիացիոն գոտու մասին» համաձայնագրի կնքման Հայաստանի Հանրապետությունը կմիանա ԵՄ միասնական ավիացիոն գոտուն, ինչի արդյունքում համաձայնագրի կողմերը փոխադարձաբար կազատականացնեն շուկան՝ ավիաընկերություններին ընձեռելով հնարավորություն առանց սահմանափակումների շահագործել երթուղիները և, հետևաբար, օգտվել ոչ խտրական, հավասար պայմաններում շուրջ 500 միլիոն բնակչություն ունեցող հսկայական շուկայի սպասարկման լայն հնարավորությունից: Ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում կներդրվեն արդյունավետորեն կիրառվող եվրոպական ստանդարտները և ավիաընկերություններին հնարավորություն կտրվի շուկայում կոմերցիոն նկատառումներից ելնելով և առանց պետությունների կողմից սահմանափակող միջամտության շահագործել երթուղիները օդի մի շարք ազատությունների իրավունքով:

Համաձայնագիրը բաղկացած է 30 Հոդվածից և 3 Հավելվածից: Համաձայնագրով սահմանվում են միջազգային օդային փոխադրումների իրականացման տնտեսական, տեխնիկական, թռիչքային և ավիացիոն անվտանգության պահանջները, ինչպես նաև կարգավորվում է պետությունների կողմից նշանակված ավիաընկերությունների առևտրային գործունեությունը, արդար մրցակցությունը, ներկայացուցչությունը, վեճերի լուծման կարգը և ավիացիայի ոլորտին առնչվող սոցիալական, շրջակա միջավայրի, բնապահպանության ԵՄ-ՀՀ համագործակցության շրջանակները: Համաձայնագրի հավելվածներով սահմանվում են համապատասխան անցումային դրույթները, ընդունման ենթակա ԵՄ կանոնակարգերը և վեճերի լուծման կանոնները (3-րդ հավելվածը ենթակա է մշակման):

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը համաձայնագրի կնքումը համարում է նպատակահարմար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ
ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

ՍԵՐԳԵՅ ԱՎԵՏԻՍՅԱՆ